

ՆԱՆԱՐ ՆԻԿՈՒԱՅԻ ԳՈՂՈՍՅԱՆ

# ՍԵՐ ԵՎ ԳԱՏԵՐԱԶՄ



Երևան 2018

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ԽՄՐԱԳՐԻՑ

Պրոֆ. Սոկրատ Խանյանի այս առաջաբանով էլ պետք էր հրատարակել արցախցի բանաստեղծուհի Նանար Պողոսյանի առաջին քերթողագիրքը: Ծանոթ եմ գրքի երկու տարբերակի: Նախնական ու վերամշակված այս տարբերակի միջև տարբերությունն ակնհայտ է, մանավանդ վերջին տարիներին՝ 2017-2018 թթ. գրված բանաստեղծությունները գեղարվեստական մտածողության թույլիցի և հեղինակի՝ չափածոյի գաղտնիքների մեջ խորանալով հմտանալու որոշակի ապացույց են:

Բանաստեղծուհին գտել է իր մարդկային զգացմունքներն ու խոհերը համապատասխան պատկերավորման միջոցներով արտահայտելու կերպը, բանաստեղծական մտածողությունը հստակվել ու զուլալվել է: Այժմ մեր առջև է հասուն բանաստեղծը, որի քերթվածներն ունեն գեղարվեստական ընդհանրացման հասնող կենսական հագեցվածություն և ընթերցողին վերընթերցելու մղելու ճգողություն: Այսպես են ճշմարիտ արվեստի երկերը, որոնց «ցինջ պարզությունը», ինչպես Ե. Չարենցն էր ասում, «ձեռք է բերվում դժվար վարժությամբ»:

Թող օտար ծամածոություններով հրապուրված, իրենց զարմացնելու ճիգերով խանդավառ մոլորյալ ընդօրինակողները տեսնեն ու համոզվեն, որ դասական ձևերը չեն սպառել իրենց, և մեր բանաստեղծական լեզուն հրաշքների է ընդունակ, եթե լինեն Ն. Պողոսյանի նման անկեղծ միտքն ու զգացմունքը ներդաշնակող հրաշագործներ:

Ճշմարիտ գրականությունը, մանավանդ բանաստեղծությունը, իրականության նույնությամբ կրկնապատկերումը չէ, այլ նոր իդեալներով նրա վրա ներգործող ու այն հարստացնող արվեստ: Այս իրողությունն է հաստատում



# **ՄԻՐԻ ՀԱՆԱԴԱՐԸ**



### ՄԵՆՔ

Դու, որ և՛ կաս, դու՛ և՛ չկաս,  
Դու և՛ արև, դու և՛ անձրև,  
Դու հոգուս երգ, դու ցավ վերջիս,  
Սիրո ակունք դու իմ կյանքի...  
Ես՝ քնքշություն քո կյանքի մեջ,  
Կրողն եմ քո գաղափարի...  
Դողում եմ քո շնչից ջերմին  
Ու կրակվում ճանապարհիդ:  
Մենք անանջատ, նաև անջատ,  
Հզոր ենք, երբ երկուսով ենք,  
Հեռանալս՝ վերջն է՛ կյանքիդ,  
Հեռանալդ՝ վերջն իմ ճամփի:

2018թ.

### ՔՈ ՍԻՐՏԸ

Քո սիրտը հուր է և սպեղանի,  
Քո սիրտն աչքերիս լույսի աղբյուրն է,  
Քո սիրտը պայծառ լուսայգն է բախտիս,  
Մտքիս թռիչքը, հոյսի համբույրն է:

Քո սիրտը կանչն է իմ երազների,  
Քո սիրտը՝ բոլոր երգերիս ոգին,  
Քո սիրտն աշխարհում իմ մեծ աշխարհն է,  
Իմ անըջանքն է, լուսակաթ հոգին:

2018թ.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխաբան.....	3
Երկու խոսք խմբագրից .....	9

### ՍԻՐՈ ՃԱՆԱԴԱՐԿ

Մենք .....	13
Քո սիրտը .....	14
Կարոտ .....	15
Տարիների մշուշներում .....	16
Քո անունը .....	17
Հոգիս քո անունն ունի.....	18
Արև տոբ կյանքիս .....	19
Գնա .....	20
Դու և ես .....	22
Քեզ հետ .....	24
Թաքուն սեր.....	25
Շունչդ խորն էր.....	26
Դու .....	27
Քո գրկի մեջ .....	28
Սիրում եմ քեզ.....	29
Արցունք.....	30
Ակնթարթ .....	31
Պատրանք.....	32
Մթոլություն .....	34
Պարտադիր ամոսնություն .....	35

### ԽՈՒՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հորս հիշատակին .....	39
Հիասթափություն .....	40
Հանրություն .....	41
Մորս .....	42
Հավատում եմ .....	43
Իմ երագած աշխարհում .....	44
Բարի հայրիկ .....	45
Իմ Կաղարծի .....	46
Իմ գյուղը .....	47
Հերոսների ճամփով .....	48
Մեր քաջ Մոնթեն .....	49
Դու, իմ հայրենիք .....	50
Հայրենիքիս .....	52

### ՊՈՆՄ ԱՊՐԻԼՅԱՆ

Պոնմ ապրիլյան կամ գարունները գնացին ու հետ չեկան .....	55
Վերջերգ .....	69